Հավելված N 416
Էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ. հունիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵԱՏՄ ԵՎ ԱՊՀ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) առևտրի և ինտեգրացիայի վարչության (այսուհետ՝ Վարչություն) ԵԱՏՄ և ԱՊՀ համագործակցության բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետի (ծածկագիրը՝ 23-32.11-Ղ4-2)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետը անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Բաժնի պետին ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետը կամ Բաժնի գլխավոր մասնագետը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2.Պաշտոնի բնութագիր

Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. ապահովում է միջազգային /տարածաշրջանային/ տնտեսական կառույցների և միությունների հետ համագործակցության աշխատանքները,
2. ապահովում է միջազգային տնտեսական ինտեգրման քաղաքականության մշակման և կարգավորման աշխատանքները,
3. ապահովում է միջազգային տնտեսության մեջ Հայաստանի Հանրապետության ինտեգրման գործընթացին աջակցության աշխատանքները,
4. ապահովում է միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացմանն ուղղված աշխատանքները,
5. ապահովում է Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության աշխատանքները,
6. ապահովում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ համատեղ աշխատանքները,
7. ապահովում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայում և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդում քննարկվող հարցերի վերաբերյալ հայկական կողմի դիրքորոշման ձևավորման և ներկայացման աշխատանքները,
8. ապահովում է Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի և Եվրասիական Միջկառավարական խորհրդի օրակարգերում քննարկվող հարցերի

վերաբերյալ նախարարության դիրքորոշման ձևավորման և ներկայացման աշխատանքները,

9. ապահովում է Եվրասիական տնտեսական միության մասին Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասով ԵԱՏՄ անդամ պետությունների միջև քննարկումների կազմակերպման աշխատանքները՝ ձևավորելով և ներկայացնելով հայկական կողմի դիրքորոշումը,
10. ապահովում է եվրասիական տնտեսական ինտեգրման զարգացման ռազմավարական ուղղությունների վերաբերյալ միջոցառումների մշակման և իրականացման աշխատանքները,
11. ապահովում է առևտրային քաղաքականության, մասնավորապես՝ երրորդ երկրների հետ ազատ առևտրի գոտու ստեղծման և առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագրերից, հուշագրերից բխող միջոցառումների մշակման և իրականացման աշխատանքները՝ Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում,
12. ապահովում է երրորդ երկրների հետ ազատ առևտրի գոտու ստեղծման համաձայնագրերի նախագծերում ընդգրկված յուրաքանչյուր բաժնի մասով /համապատասխան գերատեսչությունների հետ համատեղ/ ԵԱՏՄ անդամ պետությունների միջև քննարկումների կազմակերպման աշխատանքները,
13. ապահովում է ազատ առևտրի գոտու ստեղծման համաձայնագրերի բանակցային փուլերին հայկական կողմի մասնակցության և առաջադրված հարցերի վերաբերյալ հայկական կողմի դիրքորոշումը ներկայացնելու աշխատանքները,
14. ապահովում է Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում ներքին շուկայի գործառնության շրջանակներում Եվրասիական տնտեսական միության խոչընդոտների, սահմանափակումների և արգելքների բացահայտմանը և վերացմանն ուղղված միջոցառումները,
15. ապահովում է առևտրային քաղաքականության, մասնավորապես՝ «Ազատ առևտրի գոտու մասին» Պայմանագրից բխող միջոցառումների մշակման և իրականացման աշխատանքները՝
16. ապահովում է Հայաստանի Հանրապետության մրցունակ ապրանքների ցանկի տրամադրման աշխատանքները իրականացումը՝ ԱՊՀ համագործակցության շրջանակներում,
17. ապահովում է արտադրանքի կարևորագույն ապրանքատեսակների արտադրության, սպառման, ներմուծման և արտահանման կանխատեսումային ցուցանիշների տրամադրման աշխատանքների իրականացումը՝ ԱՊՀ համագործակցության շրջանակներում,
18. ապահովում է ալկոհոլային միասնական շուկայի ձևավորման աշխատանքները՝ Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում,
19. ապահովում է նավթի և նավթամթերքի միասնական շուկայի ձևավորման

աշխատանքները՝ Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում:

Իրավունքները՝

- պահանջել Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներից և համապատասխան մարմիններից ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր՝ հիմնավորումներ, կարծիքներ, առաջարկություններ,
- ստանալ ՀՀ պետական կառավարման համակարգի մարմիններից և շահագրգիռ կազմակերպություններից իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ մասնագիտական կարծիքներ, առաջարկություններ և եզրակացություններ,
- կազմակերպել Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների և շահագրգիռ մարմինների (այդ թվում՝ տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումների) հետ առաջադրված խնդիրների լուծման շուրջ աշխատանքային քննարկումներ,
- ստանալ անհրաժեշտ նյութեր, հիմնավորումներ, կարծիքներ համապատասխան մարմիններից միջազգային /տարածաշրջանային/ տնտեսական կառույցների և միությունների հետ համագործակցության, ինչպես նաև միջազգային տնտեսության մեջ Հայաստանի Հանրապետության ինտեգրման գործընթացին աջակցության աշխատանքների իրականացման վերաբերյալ,
- ստանալ անհրաժեշտ նյութեր, հիմնավորումներ, կարծիքներ համապատասխան մարմիններից Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության աշխատանքների իրականացման վերաբերյալ,
- ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն համապատասխան մարմիններից Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի Կոլեգիայում, Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի Խորհրդում, Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի և Եվրասիական Միջկառավարական խորհրդի նիստերում քննարկվող հարցերի վերաբերյալ,
- կազմակերպել առևտրային քաղաքականության, մասնավորապես՝ երրորդ երկրների հետ ազատ առևտրի գոտու ստեղծման և առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագրերի և հուշագրերի մշակման և դրանցից բխող միջոցառումների իրականացման աշխատանքների հետ կապված խորհրդակցություններ և քննարկումներ շահագրգիռ մարմինների մասնագետների և փորձագետների ներգրավմամբ՝ Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում,
- կազմակերպել միասնական շուկայի ձևավորման աշխատանքների իրականացման վերաբերյալ քննարկումներ համապատասխան պետական կառավարման մարմինների հետ՝ Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում:

Պարտականությունները՝

- մշակել համապատասխան դիրքորոշում միջազգային /տարածաշրջանային/ տնտեսական կառույցների և միությունների հետ համագործակցության, ինչպես նաև միջազգային տնտեսության մեջ Հայաստանի Հանրապետության ինտեգրման

գործընթացին աջակցության աշխատանքների վերաբերյալ համապատասխան մարմիններից ներկայացված հիմնավորումների, կարծիքների հիման վրա և ներկայացնել եզրակացություն,

- միջազգային տնտեսական ինտեգրման քաղաքականության մշակման և իրականացման վերաբերյալ նախապատրաստել վերլուծություններ, առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ,
- Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության աշխատանքների իրականացման վերաբերյալ համապատասխան մարմիններից տրված անհրաժեշտ տեղեկատվության հիման վրա մշակել համապատասխան դիրքորոշում,
- մշակել և ներկայացնել հայկական կողմի դիրքորոշումը՝ Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի Կոլեգիայում, Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի Խորհրդում, Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի և Եվրասիական Միջկառավարական խորհրդի նիստերում քննարկվող հարցերի վերաբերյալ համապատասխան մարմիններից ներկայացված կարծիքների հիման վրա,
- կազմել և տրամադրել ՀՀ մրցունակ ապրանքների ցանկը՝ ԱՊՀ համագործակցության շրջանակներում,
- հավաքագրել, ամփոփել և տրամադրել արտադրանքի կարևորագույն ապրանքատեսակների արտադրության, սպառման, ներմուծման և արտահանման կանխատեսումային ցուցանիշները ԱՊՀ համագործակցության շրջանակներում,
- մշակել և կազմել եվրասիական տնտեսական ինտեգրման զարգացման ռազմավարական ուղղություններին առնչվող միջոցառումների վերաբերյալ անհրաժեշտ նյութերը,
- կնքված ազատ առևտրի մասին համաձայնագրերի, ինչպես նաև ԵԱՏՄ անդամակցության պայմանագրից բխող պարտավորությունների շրջանակներում մասով ուսումնասիրել և վերլուծել համապատասխան շուկաները՝ հայրենական ապրանքների մրցունակությունը և ներկայացվածությունը ապահովելու ուղղությամբ,
- մշակել ներքին շուկայի գործառնության շրջանակներում փոխադարձ առևտրում առկա խոչընդոտների, սահմանափակումների և արգելքների բացահայտման և վերացման, երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում առկա խոչընդոտների ռեեստրի վարման աշխատանքները:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիտորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Ժամանակի կառավարում
4. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
5. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
6. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ: